ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ / ARMENIAN RED CROSS SOCIETY

ՏԵՂԵԿԱԳԻՐ | NEWSLETTER

ՀՈՒՆՎԱՐ - ՀՈՒՆԻՍ
JANUARY - JUNE **2023**

Հունիսի 22-23-ին Ծաղկաձորում տեղի ունեցավ ՀԿԽԸ Մարզային մասնաճյուղերի ամենամյա ֆորումը, որի ընթացքում ամփոփվեց տարվա առաջին կիսամյակը և քննարկվեցին ընթացիկ խնդիրներ:

On 22-23 ARCS Regional Branch annual forum took place in Tsakhkadzor, where the achievements of six months activities were summed up and current issues were discussed.

SCAN ME

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Armenian Red Cross Society
Պարոնյան 21/1 Paronyan,
Հայաստան, Երևան 0015,
Yerevan, Armenia
redcross@redcross.am
Հեռ. / Tel.:(+374) 60 62 50 50

www.redcross.am

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը և ՅՈՒՆԻՍԵՖ-ը խորացրել են համագործակցությունը

Հունվարի 24-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության կենտրոնական գրասենյակ էր այցելել ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցչի տեղակալ Սիլվիա Մեստրոնիի գլխավորած պատվիրակությունը՝ հնարավոր համագործակցության ոլորտները քննարկելու նպատակով:

Պատվիրակությանն ընդունեց ՀԿԽԸ գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանը, ներկա էին նաև ԿԽԿՄՄՖ Հարավային Կովկասում պատվիրակության ղեկավար Դավրոն Մուհամադիևը և ԿԽԿՄՄՖ հայաստանյան գրասենյակի ծրագրերի ղեկավար Հիշամ Դիաբը:

Քննարկման ընթացքում նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը և ՅՈՒՆԻՍԵՖ-ը կհամագործակցեն կանխիկ աջակցության տրամադրման, երեխաների շահերի պաշտպանության, աղետներին արձագանքման անձեռնմխելի գույքի պահեստավորման և մի շարք այլ ոլորտներում, որի համար ստորագրվեց համապատասխան համաձայնագիր:

Armenian Red Cross Society and UNICEF deepened the cooperation

On January 24, UNICEF delegation led by deputy representative Silvia Mestroni visited the Armenian Red Cross Society headquarters to discuss potential areas of cooperation.

Dr. Anna Yeghiazaryan, ARCS Secretary General welcomed the delegation, Davron Muhamadiev, Head of Delegation in South Caucasus, IFRC, and Hisham Diab, Programmes and Operations Manager, Armenia Country Office, IFRC also attended the meeting.

During the discussion, a preliminary agreement was reached, that the Armenian Red Cross Society and UNICEF will cooperate in the areas of provision of cash assistance, child protection, management of strategic warehouses and emergency stock, etc. relevant agreement was signed for that purpose.

Սիրված երգիչ Արամեն դարձել է Հայկական Կարմիր խաչի կամավոր

Սիրված երգիչ Արամեն՝ որպես կամավոր միացել է Հայկական Կարմիր խաչի ընկերության Տնային

Arame, Armenian popular singer joined Armenian Red Cross as a Home Care Volunteer

Arame, Armenian popular singer joined Gyumri team of Home Care Service of the Armenian Red Cross Society as a

խնամքի ծառայության Գյումրու թիմին: Կարմիր խաչի աշխատակիցների հետ միասին այցելել են ամուսիններ Արմենուհի Աբաջյանին և Մանվել Արմուտյանին, ապա՝ Սևիլ Ծիրվանյանին՝ առանց խնամողի մնացած տարեցների առօրյան լցնելու ջերմությամբ ու հոգատարությամբ:

Արդեն 45 տարի ամուսնացած զույգը պատմեց կնոջ տեսողության խնդիրների պատճառով դժվարացած առօրյայի մասին, իսկ տարրական դասարանների նախկին ուսուցչուհի տիկին Սևիլի հետ Արամեն զրուցեց սիրելի աշակերտներից ու գրքերից, որովհետև Գյումրու գրադարանում գրեթե գիրք չի մնացել, որը նա չի կարդացել:

Երգիչը խոստացավ, որ ակտիվ կամավոր կլինի:

volunteer. They visited the elderly couple left without a caregiver Armenuhi Abajyan and Manvel Armutyan, and Sevil Shirvanyan to fill their daily routine with warmth and care.

The couple, who have been married for 45 years, talked about their daily life made difficult by the wife's vision problems, and the former primary school teacher Mrs. Sevil told Arame about her favorite students and books, as there was hardly a book left in the Gyumri library that she had not read.

The singer promised to act as an active volunteer.

Հայկական Կարմիր խաչի կամավորները մասնակցել են ամենամյա «Ծաղկահավաք» միջոցառմանը

Ապրիլի 27-ին, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում, Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորները մասնակցեցին ամենամյա «Ծաղկահավաք» միջոցառմանը, որը կազմակերպվել է «ԱՐԱԼԵԶ» բարեգործական ՀԿ-ի կողմից՝ վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի օժանդակությամբ: Միջոցառմանը տեղադրվել էր նաև Հայկական Կարմիր խաչի ընկերության առաջին օգնության տաղավար:

Նախաձեռնությունը մեկտեղում էր պոկված ծաղիկներին «երկրորդ կյանք» հաղորդելու խորհուրդը և բնապահպանական՝ վերամշակման միջոցով, կրկին օգտագործելու առաքելությունը:

Armenian Red Cross volunteers participated in the annual "Flower Collection" event

On April 27, at the Tsitsernakaberd Memorial Complex, the volunteers of the Armenian Red Cross Society participated in the annual "Flower Collection" event, which was organized by the "ARALEZ" charitable NGO with the support of the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Values. The Armenian Red Cross Society First Aid booth was also installed at the event.

The initiative combined the advice to give a "second life" to plucked flowers and the environmental mission of reuse through recycling.

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը հզորացնում է իր թվային կարողությունները

Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) գործադիր տնօրեն Աննա Եղիազարյանը և Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԽՄՖ) Հարավային Կովկասում պատվիրակության ղեկավար Դավրոն

Armenian Red Cross Society strengthens it's digital capacities

Dr. Anna Yeghiazaryan, Armenian Red Cross Society (ARCS) Secretary General and Davron Mukhamadiev, Head of IFRC Delegation for South Caucasus signed “Strengthening the ARCS feedback mechanism through digitalization” project agreement.

Մուհամադիեվը ստորագրեցին «ՀԿԽԸ հետադարձ կապի մեխանիզմի հզորացում՝ թվայնացման միջոցով» ծրագրի պայմանագիրը:

ԿԽՄՖ կարողությունների զարգացման ֆոնդի կողմից ֆինանսավորվող ծրագիրը նպաստելու է ՀԿԽԸ թվային կարողությունների, շահառուների հետ հետադարձ կապի և հաշվետվողականության բարելավմանը:

The IFRC CBF funding will allow the ARCS to strengthen its digital environment and ensure improved digital capacities, community feedback mechanism and more accountable system.

Հայկական Կարմիր խաչը խթանում է առողջ ապրելակերպը

ARCS promotes healthy lifestyle

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Առողջապահության նախարարության, Պարենի համաշխարհային ծրագրի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ՏԻՄ-երի և այլ միջազգային կառույցների հետ համագործակցությամբ, ՀՀ բոլոր մարզերում «Առողջ ապրելակերպ» ծրագրի շրջանակներում պարբերաբար իրականացնում է հանրային միջոցառումներ՝ հանրության շրջանում բարձրացնելով իրազեկվածությունը առողջ ապրելակերպի վերաբերյալ:

ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի կամավորները, նախապես անցնելով վերապատրաստումներ, միջոցառումների ընթացքում անցկացնում են առողջ սննդի պատրաստման վարպետաց դասեր, տարբեր մասնագետների հետ՝ առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորման խորհրդատվություն, կազմակերպում են խաղեր, պարեր, աերոբիկայի, կոգնիտիվ խթանման նեյրոբիկ վարժանքներ: Խաղերի հաղթողներին տրամադրվում են մրցանակներ:

The Armenian Red Cross Society, in cooperation with the Ministry of Health, the World Food Program, the World Health Organization, local governments, and other international structures, periodically implements a number of public events in all regions of the Republic of Armenia within the framework of the "Healthy Lifestyle", raising awareness among the public about healthy lifestyles.

The volunteers of the regional branches of the ARCS, having undergone training in advance, conduct master classes in preparing healthy food during the events, consult with various specialists on the formation of healthy lifestyle behavior, and organize games, dances, aerobics, and neurobic exercises for cognitive stimulation. Prizes are awarded to the winners of the games.

Նշվեց Կարմիր խաչի և Կարմիր մահիկի համաշխարհային օրը

Մայիսի 8-ին, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժումը նշում է մարդասիրական ամենամեծ շարժման օրը: Ամեն օր միլիոնավոր կամավորներ, հազարավոր աշխատակիցներ և գործընկերներ ամբողջ աշխարհում իրենց ներդրումն են ունենում մարդասիրության տարածման գործում՝ օգնելով և կյանք փրկող ծառայություններ մատուցելով իրենց համայնքներում ապրող մարդկանց:

Այս տարի Մայիսի 8-ը նշվել է «Մենք ամեն ինչ անում ենք #Իսրտե» կարգախոսով: Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորներն իրազեկման միջոցառումներ են անցկացրել Երևանում և մարզերում՝ անցորդներին տրամադրելով թեմատիկ տպագիր նյութեր: Կարմիր խաչի և կարմիր մահիկի համաշխարհային օրը նշվեց ԿԽՄԿ հետ համագործակցության շրջանակներում:

World Red Cross and Red Crescent Day was celebrated

On May 8, the International Red Cross and Red Crescent Movement celebrates the day of the largest humanitarian movement. Every day, millions of volunteers, thousands of employees, and partners around the world contribute to the spread of humanity by helping and providing life-saving services to people in their communities.

This year, May 8 was celebrated with the slogan "We do everything #FromTheHeart". The volunteers of the Armenian Red Cross Society held awareness events in Yerevan and regions, providing passers-by with thematic printed materials. World Red Cross Red Crescent Day was organized in cooperation with the International Committee of the Red Cross Delegation in Armenia.

ՀԿԽԸ կամավորներն այցելում են մարզերում բնակվող միայնակ տարեցներին

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Շվեյցարական Կարմիր խաչի աջակցությամբ իրականացվող «Ձմեռային աջակցություն միայնակ տարեցներին» ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Տավուշի և Սյունիքի 490 միայնակ տարեցներին տրամադրում է սնունդ, եռամսյակը մեկ՝ հիգիենիկ պարագաներ, իսկ կամավորներն ամեն շաբաթ այցելում են նրանց և միասին նշում տոները:

ARCS volunteers visiting lonely elderly people living in regions

The Armenian Red Cross Society within the framework of the "Winter support for lonely elderly" project implemented with the support of the Swiss Red Cross, 490 elderly people in Gegharkunik, Aragatsotn, Ararat, Armavir, Kotayk, Tavush, and Syunik receive food every month, hygiene items every quarter, and volunteers visit them every week and celebrate the holidays together.

«Ես Երևանի աղջիկ եմ», - պատմում է 85-ամյա Լիդա Սիմոնյանը, ով հիմա ապրում է Աշտարակում: Իր մանկությունն անցել է մայրաքաղաքի սրտում, Սպանդարյան փողոցի վրա (այժմ Արամի): Տեխնիկումը ավարտելուց հետո աշխատել է Արզնի առողջարանում:

- Երևանն ուրախ, ընկերական քաղաք էր: Հետո մեր տունը քանդեցին, Աշտարակում բնակարան ենք ստացել և տեղափոխվել այստեղ, - հիշում է Լիդա Սիմոնյանը:

Երեք եղբայրներն ու ամուսինը մահացել են, սակայն ամենասարսափելի հարվածը Լիդա տատիկի կյանքում եղել է երեք երեխաների կորուստը, որոնք մահացել են իրար հետևից դպրոցական տարիքում՝ ծանր հիվանդության հետևանքով:

Լիդա տատիկի մասին բոլորը խոսել են՝ որպես միշտ օգնության հասնողի, բայց մոտ 10 տարի առաջ ընկել է, դժվարանում է քայլել և այժմ ինքն օգնության կարիք ունի:

Երբեմն այցելում են եղբոր երեխաները, իսկ բացի նրանցից Հայկական Կարմիր խաչի ընկերության Աշտարակի մասնաճյուղի երիտասարդ կամավորներն են փորձում փոքր ինչ մեղմել նրա միայնությունը:

- Մենակ մարդ իրեն վատ չի՞ զգա, ես նույնիսկ մեծ տարիքում բոլորին օգնում էի: Շատ դժվար է մենակ ապրելը, - ասում է Լիդա տատիկը:

"I am a girl from Yerevan,"- tells 85-year-old Lida Simonyan, who now lives in Ashtarak. She spent her childhood in the heart of the capital, on Spandaryan Street (now Arami). After finishing technical school, she worked in the Arzni sanatorium.

- Yerevan was a happy, friendly city. Then our house was destroyed, I got an apartment in Ashtarak and we moved there, Lida Simonyan remembers.

She lost 3 brothers, and her husband, but the most terrible was the loss of 3 children who died one after the other at school age because of a serious illness.

Everyone talked about Grandma Lida as someone who always came to help, but about 10 years ago she fell, had difficulty walking, and now needs help herself.

Sometimes her brother's children visit her. The young volunteers of the Ashtarak branch of the Armenian Red Cross Society are also trying to ease her loneliness.

"Even in my old age, I helped everyone until I was healthy. It is very difficult to live alone,"- says grandmother Lida.

Պայթուցիկ զինամթերքի ռիսկերի իրազեկման և անվտանգ վարքագծի արշավներ ՀՀ մարզերում

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ համագործակցությամբ, «Ռիսկերի իրազեկում և անվտանգ վարքագիծ 2023» ծրագրի շրջանակներում Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի 17 համայնքներում իրականացրել է պայթյունավտանգ զինամթերքի վտանգի և անվտանգ վարքագծի իրազեկման միջոցառումներ, որոնց մասնակցել է 4000-ից ավելի երեխա և մեծահասակ:

Explosive ordnance risk awareness and safe behavior campaigns in RA regions

The Armenian Red Cross Society, with the support of the United Nations Development Program and in cooperation with the International Committee of the Red Cross, within the framework of the "Risk Awareness and Safe Behavior 2023" program, carried out events to raise awareness of the danger of explosive ordnance and safe behavior in 17 communities of Tavush, Gegharkunik, Vayots Dzor and Syunik regions, where more than 4000 children and adults participated.

Իրազեկման միջոցառումների նպատակն է անհրաժեշտ գիտելիքներ փոխանցել ականների և պատերազմի պայթունավտանգ մնացորդների և կրակոցների ու հրետակոծության ընթացքում անվտանգ վարքագծի ընդհանուր կանոնների վերաբերյալ՝ նպաստելով դժբախտ պատահարների նվազեցմանը:

The purpose of awareness-raising activities was to impart necessary knowledge on mines and explosive remnants of war and general rules of safe behavior during firing and shelling, contributing to the reduction of accidents.

Հունիսի 14-ը Արյան դոնորի համաշխարհային օրն էր

Հունիսի 14-ին՝ Արյան դոնորի համաշխարհային օրը, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը կազմակերպել էր արշավ՝ «Նվիրիր արյուն, նվիրիր պլազմա, նվիրիր կյանք. արա դա հաճախ» խորագրով, որի նպատակն էր խրախուսել արյան կամավոր դոնորությունը՝ հանրապետության արյան բանկը համալրելու նպատակով:

Արշավն իրականացվել էր ՀՀ Առողջապահության նախարարության, ՀՀ ԱՆ «Պրոֆեսոր Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի (ՀՎԿԱԿ) հետ համագործակցությամբ և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, Ավստրիայի զարգացման գործակալության, Ավստրիական Կարմիր խաչի աջակցությամբ: Առավոտյան ժամը 9:00-ից 13:00-ը, ցանկացողները արյուն են հանձնել հանրապետության արյան կայաններում, որտեղ Հայկական Կարմիր խաչի կամավորներն ուղղորդել և աջակցել են գործընթացի ամբողջ ընթացքում, իսկ օրվան ընդառաջ և նույն օրը Երևանում և ՀՀ մարզերում իրազեկել են արյան դոնորության կանոնների և իմունիզացիայի կարևորության մասին:

Բոլոր արյուն հանձնողներին Հայկական Կարմիր խաչի կամավորները նվիրել են նվերներ, ինչպես նաև ներկայացման տոմսեր, որոնք անվճար տրամադրվել են Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական, Կ. Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական, Պատանի հանդիսատեսի և Հովի. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնների կողմից:

June 14 was the World Blood Donor day

On June 14, World Blood Donor Day, the Armenian Red Cross Society organized a campaign: "Donate blood, donate plasma, donate life: do it often", the aim of which was to encourage voluntary blood donation in order to replenish the blood bank of the republic.

The campaign was carried out in cooperation with the RA Ministry of Health, Hematology Center after Professor R.H.Yeolyan CJSC of RA Ministry of Health, the National Center for Disease Control and Prevention (CDC) and with the support of the International Committee of the Red Cross, the Austrian Development Agency, the Austrian Red Cross.

From 9:00 a.m. to 1:00 p.m. people donated blood at the blood stations of the republic, where the volunteers of the Armenian Red Cross guided and supported the entire process, and on the eve of the day and on the same day in Yerevan and the regions of the Republic of Armenia, they informed about the rules of blood donation and about the importance of immunization.

The volunteers of the Armenian Red Cross presented gifts to all blood donors, as well as tickets to the performance, which were provided free of charge by G. Sundukyan National Academic Theatre, Yerevan State Russian Drama Theatre named after K. Stanislavsky, Theatre for Young Audiences and Vanadzor State Drama Theatre named after Hovhannes Abelian.

Հույս՝ տնից հեռու. աշխարհի որտեղ փախստականները միշտ ներառված են

Hope away from home: a world, where refugees are always included

Հունիսի 20-ը ՄԱԿ-ի կողմից Փախստականների համաշխարհային օր էր հայտարարվել 2000 թվականից, իսկ այս տարվա կարգախոսն էր՝ «Հույս՝ տնից հեռու. Աշխարհի, որտեղ փախստականները միշտ ներառված են»: Սա ևս մեկ առիթ է ուշադրություն հրավիրելու վերջին տարիների ամենամեծ մարդասիրական ճգնաժամին՝ փախստականների հիմնախնդիրներին:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ ՄԱԿ-ի ՓԳՀ կողմից ֆինանսավորվող «Փախստականների պաշտպանություն և ինտեգրում» ծրագրի շրջանակներում, կազմակերպել էր «Մշակույթների փոխանակումը՝ ներառման խթան» խորագրով միջոցառում՝ նվիրված Փախստականների համաշխարհային օրվան:

«Քաբաբ քուբիդե», «Ֆաթուշ» աղցան, «Լավիոն» ապուր, կոկոսի կաթով նուդլ, «Ժիրամոն» ապուր, իրաքի դոլմա՝ Կոնգոյից, Հայիթիից, Սիրիայից, Իրաքից, Իրանից, Մյանմարից և այլ երկրներից Հայաստանում ապաստան գտած անձինք պատրաստեցին իրենց ազգային կերակրատեսակները՝ նշելու օրվա խորհուրդը:

Վերջին տարիներին ՀԿԽԸ-ն աջակցել է ավելի քան 120 000 անձի:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը նշված ոլորտում սերտորեն համագործակցում է պետական մարմինների հետ՝ ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության, Ազգային անվտանգության ծառայության, Ոստիկանության և ոլորտին առնչվող այլ շահագրգիռ կառույցների հետ:

June 20 has been declared World Refugee Day by the United Nations since 2000, and this year's slogan was "Hope away from home. A world where refugees are always included." This is another opportunity to draw attention to the biggest humanitarian crisis in recent years- the refugee problem.

The Armenian Red Cross Society, within the framework of the UNHCR-funded "Refugee Protection and Integration" program, organized "Exchange of Cultures to Promote Inclusion" event dedicated to World Refugee Day.

People who took refuge in Armenia from Congo, Haiti, Syria, Iraq, Iran, Myanmar and other countries prepared their national dishes: "Kabab Koobideh", "Fatush" salad, "Lavion" soup, Coconut milk noodle, "Jiramon" soup, Iraqi dolma.

In the recent years, the ARCS has supported more than 120,000 people.

The Armenian Red Cross Society closely cooperates with state bodies in the mentioned field: the Migration and Citizenship Service of the RA Ministry of Internal Affairs, the National Security Service, the Police, and other interested structures related to the field.